

մարի դրութիւնը մտցնեն իրենց հրատարակութեանց մէջ, ասով ոչ թէ միայն կուտան անոնց առանձին կատարելութիւն կամ առաւելութիւն, այլ և կը լինին տիպական օրինակ ապագայ բոլոր հրատարակիչներուն:

Հրաչեայ Աճառեան

Շուշի, 1904 փետր. 22

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Բ.

ՈՏԱՆԱԻՈՐԸ

Ժողովրդական խաղերի հիմնական ձևն է տողերի թուի նկատմամբ՝ երկատող, եռատող և քառատող. իսկ նայելով վանկերի թուին և հատածին տողերի մէջ և յանգերի դասաւորութեանը, խաղն ունի բաւական բազմազանութիւն: Ներքեւում կը թուենք գլխաւոր տեսակները:

5-վանկանի տղեր:

Հինգ վանկից պակաս վանկեր ունեցող տողեր քիչ դժուարեան են բուն խաղերի մէջ: Երեք կամ չորս վանկանի տողեր պատահում են աւելի կրկնակների մէջ. իսկ բուն երգի սովորական ամենակարճ տողն է 5-վանկանին,

դիւրութիւնն ի նկատի ունենալով, համարեա իւրաքանչիւր նոր սարքերութիւն ա. եւ ք. բաժանմամբ որոշել և միմիանցից: Օրինակի համար Ազարահեղոսի պատմութեան առաջի մասը ունի հաստատ: Շատ ցանկալի է, որ այդ առաջարկն ընդհանուր հասանութիւն և գործունեութիւն զգնէ:

որ հատածով չի բաժանուում մասերի, ինչպէս և գրական բանաստեղծութեան մէջ: Ամբողջ տողը մի ոտք է:

Հինգ-վանկանի երկեակներ, այսինքն երկատող խաղեր՝ չկան, այլ միայն եռեակներ և քառեակներ, այսինքն երեք ու չորս տողից կազմուած խաղեր:

Եռեակները սովորաբար ունին մի 4 կամ 5-վանկանի կրկնակ, որի հետ միասին մի քառեակ են կազմում: Բուն երգի երեք տողերը նոյնայանգ են, իսկ վերջի կրկնակն անյանգ է մնում: Օրինակ.

Ա՛յ բալա Հեղնար,
Շատ կերար, դեղնար,
Ինձանից լիզուար,—
Գիւլ Հեղնար ջան:

Ա՛յ բալա Մագիտ,
Խրխաղ է հագիդ,
Կարօտ եմ պագիդ,—
Գիւլ Մագիտ ջան:

Քառեակները յանգերի նկատմամբ աւելի բազմազան են: Սովորական ձևով 1-ին, 2-րդ և 4-րդ տողերը նոյնա-յանգ են, իսկ 3-րդ տողն անյանգ է մնում: Օրինակ.

Թոնդիրը հով ա,
Վըրէն լէ բով ա,
Տասներկու ջան ե՛ք,
Մի չոր լէ կով ա:
Սարերի սինձը,
Կաթն ու բրբինձը,
Քըրոջըս տարան
Դորն եկաւ ինձը: 1)
Մատիս մատանին,
Ակը թանկագին,
Դարգըս չի կըտրէ,
Կանչեմ Դարեգին:

Սարերը սարսուռ,
Ջըրերը մամուռ,
Սալդաթատիրոջ
Սիրտըն է մըրմուռ:
Մալար Մոլոզով,
Դեզին քոլոզով,
Թէ որ ինձ չառնես,
Մեռնիս մուրազով:
Մալար ունաւոր,
Դեզին չընաւոր,
Նզիկին կարգես,
Ինձ անես քաւոր:

Երբեմն երկրորդ տողն առաջինի թեթեւ փոփոխու-թիւնն է՝ իմաստի զուգահեռական կրկնութեամբ, որով նոյն բառն 1-ին և 2-րդ տողերի վերջում կրկնուում է: Օրինակ.

1) Տեղական արտասանութիւն է ինձը փոխանակ ինձիւ Վերջի-իւն սղուած է:

Էս եանը օրոց,
Էն եանը օրոց,
Աղբօրըս մեռնեմ,
Բերում ա քորոց:

Էս եանը պոպոք,
Էն եանը պոպոք,
Քաղքըցուն կառնեմ,
Հագինն ա սապոգ:

Այս չափով ասում են սովորաբար թեթեւ երգիծաբանական խաղերը, որենց առաջին մասը յաճախ կապ չունի երկրորդ մասի հետ, և կամ նոյն իսկ բառախաղ է կազմում: Ծաղրն առաջանում է ոչ միայն երկրորդ մասի յանկարծական, անակնկալ իմաստից, այլ և առաջին մասի անկապութիւնից ու բառախաղից: Օրինակ.

Էս եանը ուլկի,
Էն եանը ուլկի,
Սապոգի հետը
Նս կուզեմ չուլկի:

Սակաւ անգամ քառեակի չորս տողն ևս նոյնայանգ են լինում, ինչպէս հետեւեալ 4-վանկանի քառեակի մէջ:

Անուշաւան,
Էաղլի եաւան,
Մանչերն եկան,
Կնիկդ տարան:

Աւելի սովորական է մէջ ընդ մէջ յանգեր կազմելը, այսինքն 1-ին և 3-րդ տողերն անյանգ են մնում, իսկ 2-րդ և 4-րդ տողերը նոյնայանգ են: Օրինակ.

Ածու մ'եմ ցանե,
Սադա նարգիլի.
Իմ եարօջ մեռնեմ,
Ազիլ մազիլի:

Ածու մ'եմ ցանե,
Սադա սըխտօրի.
Իմ եարօջ մեռնեմ,
Սրտիկ պըղտօրի:

Սըհաթը ծոցիդ,
Զընջիլը ծուռն ա.
Կայնեմ ես փողոց,
Աչքըդ մեր դուռն ա:

Չեռները խաչել,
Կայնեմ ա դուռը,
Նրեօր կարմիր,
Նըման ա նուռը:

Քաղեցի խոտը,
Մատըս է փուշը.
Արսէնը պաչեց
Հեղնարի թուշը:

Ուրբաթ խօսացի,
Շաբաթ իրկուրը
Հեղնարիս տարայ
Կարօյի տունը:

Այսպիսի մէջ ընդ մէջ յանդերով քառեակները, եթէ առաջին երկու տողերն առանձին խօսքեր են կազմում, ընտկանաբար վերածւում են 10-վանկանի երկեակների, որոնց մի տողը կազմուած է երկու ոտքից, միջին ունենալով հատած: Օրինակ.

Աղբօր բլուզը ըստե չի կարուի,
 Աղբօր նըմանը ըսկի չի հարուի:
 Պոսոքի ծառը ելաւ ծիծեռը,
 Հեղնարը բռնե Արսէնի ձեռը:
 Հայրիկըս բերեց մի հաշիկ լիմոն,
 Աղջիկըդ կառնեմ, էլեապի Սիմոն:

6 եւ 5-վանկանի տղեր

Միայն վեց-վանկանի տողերից կազմուած խաղեր մեզ յայտնի չեն, բայց կան քառեակներ, որոնց 1-ին և 3-րդ տողերը վեց-վանկանի են առանց հատածի, իսկ 2-րդ և 4-րդ տողերը հինգ-վանկանի են: Հինգ-վանկանի տողերը նոյնայանգ են, իսկ վեց-վանկանի տողերն անյանգ են մնում: Օրինակ.

Նս սարէն կուգայի,	Նըկինքը ամպեր էր,
Դուն դուռը բացիր,	Ի՞նչ անոյշ թոն էր,
Ձեռըդ ծոցըդ տարար,	Նկայ դռնէն անցայ,
Ախ արիւր, լացիւր:	Ջանանըս հոն էր:

Այսպիսի կարճ քառեակների երկու տողը, քանի որ յանգը մէջ ընդ մէջ է, միանալով կազմում են 11-վանկանի երկեակներ, որոնց մի տողը կազմուած է երկու ոտքից, 6-րդ վանկի վրայ ունենալով հատած: Օրինակ.

Կանչէ, կըռուեկ, կանչէ, քանի գարուն է.
 Ղարիբներու սիրտը գունդ գունդ արիւն է:

7-վանկանի տղեր

Ամբողջ եօթ վանկը կազմում է մի տող և մի ոտք, առանց հատածի, իսկապէս ասած՝ առանց կանոնաւոր

Հատածի և համաչափ ոտքերի, որովհետև տողը բնականորէն վերածւում է երկու կամ երեք ոտքի, որոնք 4 ու 3, կամ 3 ու 4, երբեմն և 2, 3, 2 վանկանի են:

Երկու նոյնայանգ տողը միասին կազմում են մի երկնակ, որ ամենափոքրն է մեր խաղերի մէջ: Այսպիսի կարճ խաղերը սակայն շատ տարածուած չեն և ասում են միայն պարելու ժամանակ: Օրինակ Ազգագրական Հանդէս VII—VIII գիրք (1901 թ.), եր. 439 բերուած են մի շարք այսպիսի երկնակներ.

Սար, սար, ոտքերու գիւլն եմ.

Լեռն Սամսոնի քորն եմ:

Գնա, գնա, հետիդ եմ,

Աարմիր խնձոր գօտիդ եմ:

Արե նոր ա ծեղկեր ա,

Նարս ծաղիկ զրկեր աւ եւայն:

Սակաւ անգամ երկեակն անյանգ է մնում. այսպիսի մէկը գտնում ենք, օրինակ, Յովսէփեանի «Փշրանքներ», եր. 14.

Իմ մէր ինձի սնց պահեց,—

Մալուկ գիւլբանդի նման:

Այսպիսի անյանգ երկեակները, սակայն, հաւաստեալ կարելի է ասել, որ հիմնական չեն. ալ մի որ և է քառեակի վերջին երկու տողերը, որ սկսել են անկախ ասուել, բայց դեռ իրենց ինքնուրոյն կերպարանքը չեն ստացել: Վերեւի երկեակն, օրինակ, մաս է կազմում հետեւեալ քառեակի.

Ամպէլ ա ամպի նման,

Շաքար եմ զանգի նման.

Իմ մէրն ինձ սնց ա պահել,—

Մալած գիւլբանդի նման:

Եօթ-վանկանի եռեակները թուով սակաւ են: Գրանց երեք տողն ևս նոյնայանգ են: Օրինակ.

Գացի արտեր, բռնի լոր,

Աղջիկ տեսայ ետի ձոր,

Նման էր կարմիր խնձոր:

Քար մի թալի մեր զըլին,

Թող գայ նստի քու թըլին.

Աբրակ տու զարիւր փըլին:

Արև դիպաւ սարերուն,
Կաքաւ թռաւ քարերուն,
Լորիկ կայնե վեր դարուն:

Լոր փախաւ, մտաւ ձեր տրտ,
Դու մի եղնի ծանր դարդ,
Արտեմ քաղէ ու դիր բարդ:

Եօթ-վանկանի քառեակներն ամենից շատ սիրուած և տարածուած են մանաւանդ արեւելեան հայերի մէջ: Այս խաղերի 1-ին, 2-րդ և 4-րդ տողերը նոյնայանգ են իսկ 3-րդ տողն անյանգ է մնում: Ըստ բովանդակութեան առաջին երկու տողերը, շատ քիչ բացառութեամբ, առանձին առանձին խօսքեր են, իսկ վերջին երկու տողը յաճախ մի խօսք են կազմում. 3-րդ տողի անյանգ մնալը շուտ է տալիս ոտանաւորի բնաւորութիւնը, ինչպէս որ բովանդակութիւնն էլ է հենց պահանջում: Օրինակ.

Մտիկ արէք էն դըշին,

Սարի թրթնջուկ թաղա,

Ոտը դրել ա փըշին.

Մեղր ու շաքար քեզ մաղա.

Գլուխըս մատաղ կանեմ

Ինձ պէս նազանի աղջիկ

Թուխ աչք ու կարմիր թըշին:

Քեզ պէս տըղին սնց սաղայ:

Մեր խաղերի մեծագոյն մասն այսպիսի կազմութիւն ունեցող քառեակներ են:

Սակաւաթիւ 7-վանկանի քառեակներ կան, որոնց չորս տողն ևս նոյնայանգ են կամ յաջորդաբար զուգայանգ են, այսինքն 1-ին և 2-րդ տողն իրար հետ են յանգ կազմում, իսկ 3-րդ ու 4-րդ տողերն իրար հետ կամ թէ տողերը մէջ ընդ մէջ զուգայանգ են, այսինքն 1-ին և 3-րդ տողը մի յանգ ունին, իսկ 2-րդ և 4-րդ տողը մի ուրիշ յանգ: Այսպիսի յանգերով քառեակները սակայն հիմնական չեն, այլ երկեակներից կազմուած քառեակներ, որոնց կազմութեան մասին յետոյ կը խօսենք:

8-վանկանի տղեր

Տողը կազմուած է ութ վանկից և սովորաբար երկու ոտք ունի, մէջ տեղում ունենալով հատածը: Սակաւ անգամ հատածը մէջ տեղում չի ընկնում և տողը կամ առանց հատածի մնալով ամբողջ մի ոտք է կազմում. կամ թէ անկանոն հատածներով մեծ ու փոքր ոտքերի է բաժանուում:

Երկու նոյնայանգ տողերը կազմում են մի փոքրիկ խաղ, մի երկեակ, որ աւելի սիրուած է արեւմտեան խաղերի մէջ։ Այսպիսի կարճ երկեակներն եւս սովորաբար առում են պարելու ժամանակ։ Օրինակ՝ Սրուանձտեանի Համով—Հոտով եր. 305 բերուած են մի շարք այսպիսի երկեակներ, որոնց հետ սակայն վերջը կցուած են ուրիշ երգեր։

Մօկաց սարեր, պետ պետ քարեր,

Դեռ չէր լուսցեր, արեն առեր։

Եւ քե մեռնեմ ապտալի ծուռ։

Բաս ա կան գաս շիւար ու ծուռ։

Բարակ մանած, երկէն խինած,

Մանեմ մանեմ, կտրաւ մանած։ Ելն։

8-վանկանի եռեակները, որոնց երեք տողն եւս նոյնայանգ են, աւելի դործածական են քան 7-վանկանի եռեակները։ Օրինակ.

Արեն ելաւ կամար կամար,

Զուլօն կապեց ոսկէ քամար,

Եւ կը մեռնեմ քեզի համար։

Դու դաշտ կուգաս հուլա հուլա,

Կու նըմանիս բամիկ քուլա.

Աչքս տեսաւ, սիրտս կուլայ։

Դու կայներ ես աղբրան ական,

Փէլքդ կըտայ արեգական,

Կարմիր երեսք, արիւն-կաթան։

Զուրը կերթաս ջուխտ դորակով,

Սիրալս կէրես բոց կրակով,

Քեզի փախցում ալ քուռակով։

Հարաւ քամին կը չընդչընգայ,

Սաղ քամանին կը ճընգճընգայ,

Եւ քու սիրուդ հիւանդ ընկայ։

Տան քով անցայ, թափ քէլեցի,

Լանկով զարկի, զերդիկ բացի.

Նարլս տուն չէր, նստայ լացի։

Աւելի սիրուած են, մանաւանդ արեւմտեան խաղերի մէջ, 8-վանկանի քառեակները։ Յանգերի նկատմամբ այս քառեակների կամ ըոլոր տողերն եւս նոյնայանգ են, որ սովորականն է, կամ թէ յաջորդաբար զուգայանգ։ Օրինակ.

Մեր ջուխտ գութան դաշտ կուբանի,

Զուլօ խաթուն հաց կուտանի.

Մին կու քէլէ, մին կու կայնի,

Աչքով, ունքով մարդ կու սպանի։

Մեր տուն, ձեր տուն մօտիկ մօտիկ,

Դու կապել ես կարմիր դօտիկ.

Երթանք, քաղենք կանաչ խոտիկ,

Տեսնենք՝ Վեր կարն է խօրոտիկ
 Մեր տուն, ձեր տուն գիմաց գիմաց,
 Հար երբ աչքով անեմ իմաց.
 Իմ երեսի հայէն գնաց,
 Միսս հալաւ, սկիռ մնաց:
 Աէս գիշերէն չուրի մկայ,
 Աղջիկ, քո ձէն անոյշ կը դայ.
 Աչքով ձէնով գիս էրեցիր,
 Քո սէրն ի վրէս թափեցիր:

Նրկու ամառ, իրեք ձմեռ
 Հերիք անես 'ձի կիսամեռ,—
 Գիշեր ցերեկ քո կարօտով,
 Օր չեմ տեսնե ցամաք աչքով:
 Արեն առե ալ նարնջի,
 Հերիք անես ձիկ դարնջի.
 Նրկէն գիշեր, երկէն խաբար,
 Աստուած սիրես, արե՛ ձիկ առ:

Կան նաև սակաւաթիւ քառեակներ, որոնց 3-րդ տողն անյանդ է մնում, ինչպէս սովորական 7-վանկանի քառեակի մէջ:

Գարուն եկաւ, ամառ գնաց,	Գէս գիշերին է հաւասօոց,
Աչքս մնաց ճամբրներաց.	Մէրիկ, մեր է կորիճ իմ ծոց,
Աստուածամօր խնդիր ունիմ,	Թըֆըլ մըֆըլ մատղաչ մանուկ
Գուռ մի բանալ կարիքներաց:	Զինայ ցրուի իմ սրտի խոց:

Քեզ կուղարկեմ դուդայ սալամ,
 Թող իմանայ աշխարհ տլամ,
 Թէ չատ մնաս, թէ քիչ մնաս,
 Ա՛խ, կարիր եար, սիրուդ կուլամ:

7 եւ 8-վանկանի տղեր

Սակաւաթիւ խաղերի մէջ 7 եւ 8-վանկանի տղերի խառնուրդ է լինում, այսինքն առաջին տողը 7-վանկանի, իսկ երկրորդը 8-վանկանի: Այս խառն չափով կաղմում են նոյնայանդ երկեակներ եւ կամ 3-րդ տողն անյանդ քառեակներ: Օրինակ.

Թալիշու ճամբէն դուդ ա,
 Անտօն կայնիկ Աշխէն կուդայ.
 «Ինձ պէս ազէն քեզի հետ,
 Աստուած վկայ, լաւ կը սաղայ»:

ԱՆՏՈՒՆԻ չափ

7 և 8-վանկանի տողերի գեղեցիկ խառնուրդ լինում է «Անտունի» չափի մէջ, որ մեր ամենից ներգաշնակ ու երաժշտական ոտանաւորն է կազմում: Այս չափը միանգամայն և մեր ամենահին ժողովրդական չափն է: «Գրիգոր Նարեկացուց իմանում ենք, որ 10-րդ դարում արդէն այս չափը սովորական է եղել նրանց համար, «որք զլալեացն յեղանակեն քանաստեղծութիւն»: Այժմ ևս այս չափով յօրինուած երգերը մեծ մասամբ ողը են և վերաբերում են պանդխտութեան: Ակնայ կողմերում այս չափով յօրինուած պանդխտութեան երգերը կոչւում են «անտունի» երգեր, այսինքն անտուն, տուն չունեցող, պանդուխտ մարդոց երգեր: Նոյն անունով կոչւում ենք և չափը: Սիրոյ երգեր ևս կան յօրինուած այս չափով. միջնադարեան երգիչներին մանաւանդ շատ սիրելի է եղել այս չափը, որ ձեռագիրների մէջ կոչւում «հայրենի» կամ աւելի ճիշտ՝ «հայերէնի»:

Անտունի չափը մեր միակ երաժշտական շեշտական չափն է, որի ոտքերը պարզ են, այսինքն մի շեշտուած և մի կամ երկու անշեշտ վանկից են կազմւում, մինչ միւս չափերի մէջ ոտքերը բարդ են: Անտունի չափը ամեն տող ունի երեք շեշտ և երեք ոտք, հետեւեալ հիմնական դասաւորութեամբ առաջին և երկրորդ տողի մէջ.

օ ' օ օ ' օ ' /

օ օ ' օ ' օ օ /

Ասել չի ուղիւ, որ ինչպէս ամենայն շեշտական ոտանաւորի, նոյնպէս և մեր անտունի չափի մէջ կարող են անշեշտ վանկեր անցնել շեշտուած վանկերի տեղ: Էականը այն է միայն, որ տողի վերջին տաղաչափական շեշտը և տողամիջի տաղաչափական շեշտերից մէկը կամ միւսն ընկնին բառի քերականական շեշտի հետ և զօրեղ լինին, իսկ տողամիջի միւս շեշտը կարող է ազատ մնալ: Բերենք մի քանի քառեակ Նարեկացու Վարդապառի տաղից և բացատրենք այս:

Գոհար վարդըն վա՛ն առնալ
 Ի վեհից վարսիցն արփենից
 Ի վեր ի վերայ վարսից
 Ծաւալէր ծաղիկ ծովային:

Այս քառեակի առաջին տողի երկրորդ սարքի մէջ՝ վարդըն վա՛ն նախորդ և յաջորդ շեշտուած բառերի ազդեցութեան տակ՝ վարդըն բառը կորցնում է իւր քերականական շեշտը և տաղաչափօրէն համարւում է անշեշտ:

Ի հա՛մ-|առարած ծովէն
 Պըպըջէր գոյնը՛ն ա՛ն ծաղկին
 Երփին երփնունակ ծաղկին
 Շողշողէր պըտոնն ի ճըղին:

Այս քառեակի առաջին տողի մէջ ի համատարած բառը քերականօրէն մի շեշտ ունի, բայց տաղաչափօրէն մի շեշտ ևս ենթադրւում է համ-վանկի վրայ: Երկրորդ տողի մէջ գոյնըն բառի քերականական շեշտը կորչում է նախորդ պղպըջէր բառի զօրեղ շեշտի ազդեցութեան տակ, իսկ տաղաչափական շեշտը ենթադրւում է երկրորդ վանկի վրայ՝ գոյնըն:

Ի փո՛ւնջ խուռներամ վարդից
 Գոյնզգոյն ծաղկո՛ւնք ծաղկեցան,
 Այդ սօս ու տօսախ ծառերդ
 Վարդազոյն ոսսս ար-|ձակեցին:

Վերջին տողի ոսսս միավանկ բառն անշեշտ է անցնում նախորդ շեշտի ազդեցութեան տակ, իսկ արձակեցին բառի առաջին վանկն ևս տաղաչափօրէն շեշտուած է ենթադրւում:

Ի երենք մի քանի օրինակ ժողովրդական քառեակներից:

Ծոցիկդ առաւօտ նըման,
 Առաւրան չաղիկն է վըրան.
 Շաղուոր, ետ ու ետ դընա,
 Որ ցաթէ արեւն ի վըրան:
 Ղարիբ եմ ու ձերն եկի,
 Ձեր հոգուն համար պահեցէք.
 Ապրիմ նէ՛ աղեկ անիմ,
 Թէ չապրիմ՝ տարէք, թաղեցէք:

Ձինակ մ'որ ջըրէն գատեա,
 Ջուր մին ակ ձգես նէ՛ չապրիր.
 Մարիկըն օր տղէն գատեա,
 Ճար չըկայ պիտի մեռանի:
 Աչերս է չարզախ նըման,
 Մէջն երկու տղւոր կու կենան.
 Մեծիս մեծ արեւ կ'ասեն,
 Պըտիկին արեւ լուսինկան:

Այս չափի տաղաչափական աղատութիւններէց մէկն է, որ տողամիջի, այսինքն առաջին կամ երկրորդ տաղաչափական շեշտերից մէկն իւր տեղում չէ լինում. փոխանակ երկրորդ վանկի վրայ ընկնելու՝ երրորդի վրայ է ընկնում, և ընդհակառակն՝ փոխանակ երրորդի վրայ ընկնելու՝ երկրորդի վրայ ընկնում: Օրինակ.

Փըւււււււ ապրուշոււ խալի,

Որ գործած քաւներկո՛ւ տարի...:

Ջարդարեմ ոսկի սեղնակ,

Խաչ խորված կաքան ի վըրայ:

Առաջին երկեակի երկրորդ տողի մէջ տասներկու տաղաչափօրէն շեշտուած պիտի լինէր իբրև տասներկու. իսկ յաջորդ երկեակի մէջ առաջին տողի առաջին բառը զարդարեմ՝ տաղաչափօրէն պէտք է շեշտուէր իբրև զարդարեմ:

Այս տաղաչափական աղատութիւնը սակայն, որ մէկ մէկ պատահում է, չի խանգարում երգի ընդհանուր երաժշտականութիւնը, որովհետև միւս երկու շեշտը տեղումն և զօրեղ արաասանուելով՝ յաջորդ կամ նախորդ շեշտը թուլանում է և անկանոնութիւնն զգալի չի լինում:

Յանգն այս չափի մէջ աղատ է. պատահաբար յանգեր կազմում են այս կամ այն տողերը, բայց սովորաբար անյանգ է ոտանաւորը:

Այս չափով յօրինուած քառեակները կարող են վերածուել և երկեակների, որոնց տողն այն ժամանակ կազմուած է լինում 15 վանկից, եօթներորդ վանկի վրայ հասածով.

Ադ ո՛վ ադ երկիկդ եկեր,||ադ օտա՛ր հողը կու կոխէ,

Թէ մարդ ես նէ վա՛ր եկե՛ւ,||թէ չուչան ծաղիկ գնալու:

9-վանկանի տղեր

Ինն-վանկանի խաղեր չկան: Բայց կան 9-վանկանի տղեր, որոնք գործ են ածւում իբրև կրկնականեր, երբեմն միացած եօթ-վանկանի տղերի հետ: 9-վանկանի տղը կամ երեք հաւասար ոտք ունի, կամ երկու ոտք՝ 5 և 4-վանկանի:

Հով արէք, սարեր ջան, հով արէք,

Իմ դարդին դարման արէք:—

Այ պուճուր աղջիկ, դալդովն արի:

Իսկ եթէ քառեակի մէջ ես պատահում են առաջին մի կամ երկու տողն Ծ-վանկանի, այդ առաջանում է գլխաւորապէս նրանից, որ կրկնակի եղանակը միանում է բուն խաղի եղանակին և աւելի է մի աւելի բարդ եղանակ, որով երգւում է բուն խաղը: Այս պատճառով քառեակի այն տողերն եւս, որ ինն վանկանի կրկնակի եղանակով են երգւում, վերածւում են ինն վանկի: Այսպէս կազմուած են օրինակ հետեւեալ քառեակները.

Հով արէք, սարեր ջան, հով արէք,

Իմ դարդին դարման արէք.—

Սարերը հով չեն անում,

Իմ դարդին դարման անում:

Ամպեր, ամպեր, մի քիչ զով արէք,

Վարար անձրև թափէք ծով արէք,

Գէշ մարդու օր-արերը

Սև հողի տակով արէք:

10-վանկանի տղեր

Ինչպէս տեսանք, մէջ ընդ մէջ յանդերով 5-վանկանի քառեակները կարող են իբրև 10-վանկանի երկեակներ ևս առնուել, որոնց մի տողն ունի երկու տաք, միջին ունենալով հատած: Այսպիսի 10-վանկանի տողերով կազմուած խաղերը բաւական տարածուած են, մանաւանդ արեւմտեան հայոց մէջ:

Երկեակները և եռեակները, որոնք նոյնայանդ են, սակաւաթիւ են.

Ելեր ես իգին խաղող կը քաղես,

Նորա չորս բոլոր կանաֆիշ չարես:

Նս նըռան գինի, դու անուշ քեասայ,

Դու լից, դու խըմի, քո դարդ ձիկ ասա:

Մտեր ես իգին խաղող կը քաղես,

Շամամ ծծեղով չաքար կը մաղես,

Ալմաստ խանչալով զիմ սիրտ կը դաղես:

Բոստան եմ դրե վերե կն դարին,
Աստուած չէն պահի էս տարուան տարին,
Շամամ մի չելաւ ուղարկեմ հարին:

Աւելի սիրուած են քառեակները, որոնց չորս տողն
ևս նոյնայանգ են, կամ՝ յաջորդաբար զուգայանգ.

Ծովուն հաւք մի կէր, անունն էր արօր,
Ճախկն էր կարմիր, սրտիկ սեւաւոր,
Կապեմ բիշարէն, երթամ հետ ինոր,
Էն իմ դարդ գիտէր, ես էլ գօ էնոր:

Նրկինքն էր ամպե, կու գար մարմար ձիւն,
Կու գար, կը թափէր վեր մալուլ մարդուն.
Մէկ էս եմ մալուլ, թէ աշխարհ բիթուն,
Իմ եարոջ սիրուն մնամ երեւուն:

Ծաղիկ եմ ցանե, չորս բոլորն է վարդ,
Վարդի հոտն անուշ կը ցրուի իմ դարդ.
Փնջիկ մի քաղեմ, ուղարկեմ հարիս,
Կարօտս չը մնար վեր աստըւորիս:

Երբեմն 3-րդ տողն անյանգ է մնում.

Նրեադ է փթթե նման վարդի քոլ,
Թէ կուգես արծաթ, կուտամ ոսկի բոլ.
Քո սէրն իմ սիրոյ կապենք, կապկըպենք,
Անցնենք սար ու ձոր, երթանք Բասամբօլ:

11-վանկանի տողեր

11-վանկանի երկեակներ, տեսանք, կազմում են 6
և 5-վանկանի քառեակներից, որոնց յանգերը մէջ ընդ
մէջ են. տողն երկու ոտք է, 6-րդ վանկի վրայ հատա-
ծով: Այսպիսի երկու երկեակները միասին կազմում են
քառեակներ, որոնց տողերը յաջորդաբար զուգայանգ են.

Նլեր եմ, կերթամ կը, վե՛լ գիտէ հալըս,
Մէ մա Աստուած գիտէ դառնալս ու գալըս.
Մարիկ, ձեռքըդ տալո՞ւնեմ, ես, մնաս բարով.
Արզանի կամօքըդ պադ ըմ տուր սիրով:

11-վանկանի տողերն ունին և ուրիշ չափ. ամեն տող ունի
երեք ոտք, տողը բաժանելով հատածներով չորրորդ և ու-
թերորդ վանկի վրայ: Օրինակ.

Վարդն ի բացուե | Վանայ քաղքի | էգեստար.
Աստուած սիրես, | մէկն ուղարկի | ձիկը տար.
Քան նաղերով, | քան խօրտակ, | դու վիճն ես.
Աշխարհ գիտի, | ալամ գիտի՝ | դու իմն ես:

12-վանկանի տողեր

Այսպիսի տողեր չառ գործածական չեն մեր խաղերի մէջ: Բայց կան մի քանի երգեր, որոնք կազմուած են առանձին արուեստով երեք ոտքից, հատածը դնելով երրորդ և եօթներորդ վանկերի վրայ, որով տողը կազմուած է լինում 3, 4 և 5-վանկանի ոտքերից:

Այս չափը գործածուած գտնուած ենք մի քանի երգիծաբանական երգերի մէջ, որոնց տողերի անհաւասար ոտքերով կազմութիւնը հենց համապատասխան է ծաղրական բովանդակութեան: Օրինակ.

Կոտ ու կէս | կորեկ ունիմ | ցանկու համար,
Ճնճուղներ | ժողվան եկան | ուտելու համար:—
Էն գիզան | պետ պետ գիզան | տեսէք թէն սրն է.
Էս գիզան, | պետ պետ գիզան, | էն գեղի համբէքն է:

Պատահում է, որ 8-վանկանի տողերի մէջ ևս մի 4-վանկանի ոտք է աւելանում, որով տողը 12-վանկանի է դառնում՝ բաժանուած երեք 4-վանկանի ոտքերի: Այսպիսի տողեր կրկնակների մէջ ևս պատահում են: Օրինակ՝ այդպիսի աւելի ոտք ունի հետեւեալ քառեակի վերջին տողը:

Քեզի մեռնիմ, խաթուն կեսուր,
Քո ծուռ լաճուն խրատ մը տուր,
Չերթայ սլառի գոմչի մըսուր,
Շէկ շամբուս, չիմալ բոյս, ինչ կայ դըսուր:

12-վանկանի տողերից աւելի երկար տողեր, 13, 14, 15 և 16-վանկանի, գործածական չեն մեր խաղերի մէջ:

Մ. Ա.

(Շարունակելի).